բացակայությունը զրկում է դատարանին դրա շրջանակներում Հանձնաժողովի գործողությունների իրավաչափությունը գնահատելու հնարավորությունից:

Ավելին՝ դատարանն արձանագրում է, որ ըստ հայցադիմումի պատասխանի, 25.12.2023 թվականի ՔՀ-ԷԱՃԱՊՁԲ-23/09 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ձևով գնման ընթացակարգի հայտերի բացման և գնահատման նիստի թիվ 02 արձանագրության և գնման ընթացակարգի էլեկտրոնային աճուրդի 19.01.2024 արձանագրության ուսումնասիրությունից հստակ չէ, թե ի վերջո նշվածներից որն է հանդիսացել հայցվորի կողմից ներկայացված հայտի մերժման հիմքը:

Մասնավորապես՝ պատասխանողը հայցադիմումի պատասխանով նշում է, որ որպես հայտի մերժման հիմք հանդիսացել է հայցվորի կողմից առաջարկվող ապրանքների տեխնիկական բնութագրերի անհամապատասխանությունը հրավերով պահանջվող տեխնիկական բնութագրերին, այն է՝ հողաֆրեզի դեպքում հրավերով իմպերատիվ պահանջ է եղել աշխատանքային խորությունը՝ 20սմ, մինչդեռ ընկերության պաշտոնական կայքում տեղադրված ապրանքի տեխնիկական բնութագրում նշված է 12-18սմ, մամլիչ/հակավորիչ սարքի դեպքում հրավերով իմպերատիվ պահանջ է եղել արտաքին լայնությունը՝ 240սմ, իսկ հայցվորի պաշտոնական կայքում արտաքին լայնությունը նշված է 259սմ: 25.12.2023 թվականի արձանագրությամբ պատասխանողը նշում է, որ չի ներկայացրել 1 և 6 չափաբաժինների համար պահանջվող անձնագրերի արտատպված տարբերակը, իսկ 19.01.2024 արձանագրության 8.1 կետով որպես հայտի մերժման հիմնավորում նշվել է՝ նախահաշվային գնի գերազանցում:

Փաստերի նման դասավորվածության պայմաններում, դատարանը գտնում է, որ արձանագրության մեջ արձանագրված անհամապատասխանությունների մանրամասն նկարագրման պահանջի պահպանումը էական նշանակություն ունի գնման գործընթացի օրինականությունը և թափանցիկությունը երաշխավորելու տեսանկյունից, որպիսի փաստի բացակայության պայմաններում վիճելի է մնում հայտում ներկայացված ապրանքի (հողաֆրեզի և մամլիչ/հակավորի) համապատասխանությունը գնման ընթացակարգի հրավերում ներկայացված պահանջներին, ուստի՝ հայտի մերժման որոշման հիմքում ընկած փաստերը հիմնավոր գնահատվել չեն կարող և հանգեցնում են հայտի մերժումը ոչ իրավաչափ լինելուն: Վերոգրյալի արդյունքում Դատարանը գտնում է, որ հայցվորի պահանջը ենթակա է բավարարման:

Դատարանը միաժամանակ արձանագրում է, որ ՔՀ-ԷԱՃԱՊՁԲ-23/09 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ձևով գնման ընթացակարգի հրավերում բացակայում է սարքերի/ապրանքների անձնագրերի արտատպված տարբերակի ներկայացման պարտավորություն, հետևաբար նման պահանջի բացակայության պայմաններում անհիմն և ոչ իրավաչափ է 27.12.2023թ. 17:10-ին հրապարակված ՔՀ-ԷԱՃԱՊՁԲ-23/09 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ձևով գնման ընթացակարգի հայտերի բացման և գնահատման նիստի Գնահատող հանձնաժողովի 1 և 6 չափաբաժինների մասով «Հրաշք այգի» ՍՊԸ-ին չընտրված մասնակից հայտարարելու /մերժման/ որոշումը, որի հիմքով ևս ենթակա է անվավեր ճանաչման

Անդրադառնալով դատական ծախսերին՝ դատարանը գտնում է, որ, որպես պետական տուրք, պատասխանողից հօգուտ հայցվորի ենթակա է բռնագանձման 60000 ՀՀ դրամ, քանի որ համաձայն «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 9.2-ին կետի՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով դատարաններ տրվող հայցադիմումների, դիմումների, դատարանի դատական ակտերի դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար պետական տուրքը գանձվում է հետևյալ դրույքաչափերով.

«Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիմքով նախատեսված վեճերով՝ բազային տուրքի 60-ապատիկի չափով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում է բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

Դատարանը, ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ, 191-192-րդ, 234.12-րդ հոդվածներով,

Վ Ճ Ռ Ե Ց

«Հրաշք այգի» ՍՊԸ-ի՝ ի դեմս ներկայացուցիչ Միքայել Ավետիսյանի հայցն ընդդեմ Քաջարանի համայնքապետարանի՝ ՔՀ-ԷԱՃԱՊՁԲ-23/09 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ձևով գնման ընթացակարգի Գնահատող հանձնաժողովի 1 և 6 չափաբաժինների մասով «Հրաշք այգի» ՍՊԸ-ին չընտրված մասնակից հայտարարելու /մերժման/ որոշումը անվավեր ճանաչելու պահանջի մասին, բավարարել:

Անվավեր ճանաչել Քաջարանի համայնքապետարանի ՔՀ-ԷԱՃԱՊՁԲ-23/09 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ձևով գնման ընթացակարգի Գնահատող հանձնաժողովի 1 և 6 չափաբաժինների մասով «Հրաշք այգի» ՍՊԸ-ին չընտրված մասնակից հայտարարելու /մերժման/ որոշումը:

Քաջարանի համայնքապետարանից հօգուտ «Հրաշք այգի» ՍՊԸ-ի բռնագանձել 60000 ՀՀ դրամ՝ որպես հայցվորի կողմից նախապես վճարված պետական տուրքի գումար:

Սույն վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ հրապարակման պահից մեկամսյա ժամկետում:

Վճիռը կամովին չկատարելու դեպքում այն կկատարվի դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության միջոցով՝ պարտապանի հաշվին:

ԴԱՏԱՎՈՐ ՎԱՀԱԳ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ